

Արտաքին առևտուրը, երբ ձեռնարկությունները հետերոգեն են


Մոնոպոլիստական մրցակցության ճյուղի նախորդող վերլուծությունում համարել ենք, որ ձեռնարկությունները սիմետրիկ են, մասնավորապես՝ բոլորի սահմանային ծախսերը նույնն են:

Ստորև դիտարկում ենք, այն դեպքը, երբ մոնոպոլիստական մրցակցության ճյուղում ձեռնարկությունների սահմանային ծախսերը տարբեր են, թեպետ նախկինի պես համարում ենք, որ ձեռնարկությունների պահանջարկի կորերը սիմետրիկ (նույնն) են:

Դիցուք ունենք երկու ձեռնարկություն, որոնցից առաջինի սահմանային ծախսը MC_1 է, երկրորդինը՝ MC_2 , ընդ որում $MC_1 < MC_2$ (գծ. 1):

Հիշենք, որ շահույթն առավելարկվում է սահմանային ծախսի և սահմանային հասույթի հատման կետում: Ուստի՝ շահույթի առավելարկման համար ձեռնարկությունները կսահմանեն համապատասխանաբար P_1 և P_2 գին, ընդ որում $P_1 < P_2$, $Q_1 > Q_2$:

Գծանկար 1



Պահանջարկի (D) և սահմանային հասույթի (MR) կորերը ուղղահայաց առանցքը հատում են միևնույն M կետում: Այդ կետում թողարկումը զրո է:

Ընդհանուր դեպքում, մոնոպոլիստական մրցակցության ճյուղում պահանջարկը նկարագրում ենք հետևյալ կերպ. $Q = S\{1/n - b(P - \bar{P})\}$: Ուստի $P = \bar{P} + 1/bn - Q/Sb$:

Այսինքն՝ պահանջարկի կորի (D) թեքման անկյունը $1/Sb$ է, իսկ ուղղահայաց առանցքին հատման կետը $\bar{P} + 1/bn$ է: Այսինքն՝ $M = \bar{P} + 1/bn$:

Քանի որ MR կորն ավելի ուղղահայաց է, քան D կորը, ապա $P_1 - MC_1 > P_2 - MC_2$: Հետևաբար՝ առաջին ձեռնարկության գործառնական շահույթն ավելի մեծ է $(P_1 - MC_1) * Q_1 > (P_2 - MC_2) * Q_2$:

Հիշենք՝ ընդհանուր շահույթը հավասար է գործառնական շահույթի և ֆիքսված ծախսի տարբերությանը:


Այսպիսով՝ ավելի ցածր սահմանային ծախս ունեցող ձեռնարկությունը

- սահմանում է ավելի ցածր գին ($P_1 < P_2$),
- ունի ավելի բարձր վերադիր ($P_1 - MC_1 > P_2 - MC_2$),
- թողարկում է ավելի մեծ քանակ ($Q_1 > Q_2$),
- արդյունքում՝ ստանում է ավելի մեծ գործառնական շահույթ:

Դրանով իսկ, ձեռնարկության գործառնական շահույթը և սահմանային ծախսը միմյանցից հակադարձ են կախված: Այսինքն՝ սահմանային ծախսի նվազմանը զուգընթաց գործառնական շահույթն ընդլայնվում է: Գծ. 2 պատկերում է, թե կախված սահմանային ծախսի մեծությունից, որքան է գործառնական շահույթը:

Նկատենք՝ գործառնական շահույթը դրական է բոլոր այն ձեռնարկությունների համար, որոնց սահմանային ծախսը փոքր է $M = \bar{P} + 1/bn$ -ից:

Գծանկար 2



Երկարաժամկետ հավասարակշռություն

Երբ ձեռնարկությունների ծախսերը սիմետրիկ (նույնն) են, ապա տնտեսական շահույթի առկայության դեպքում նոր ձեռնարկությունների մուտքը ճյուղ շարունակվում է այնքան, մինչև տնտեսական շահույթը հավասարվում է զրոյի:

Իսկ ինչպե՞ս է իրավիճակը, երբ ձեռնարկությունների ծախսերը սիմետրիկ չեն:

Մեր օրինակում, երբ ձեռնարկության սահմանային ծախսը M -ից մեծ է, ապա այն շուկայից դուրս կմղվի, քանի որ գործառնական շահույթը բացասական է: Նկատենք, շուկայից դուրս մղվող ձեռնարկությունը *վնաս է կրում ֆիքսված ծախսի չափով*, որը նա կատարել էր շուկա մուտք գործելու համար:

Բնականաբար, ձեռնարկությունն ի սկզբանե ճյուղ մուտք չէր գործի, եթե տեղյակ լիներ, որ իր սահմանային ծախսը M -ից մեծ է լինելու:

Համարում ենք, որ սահմանային ծախսի մեծությունը նախապես հայտնի չէ, և հայտնի է դառնում միայն ճյուղ մուտք գործելուց, այսինքն՝ ֆիքսված ծախսը կատարելուց հետո:

Արդյունքում, ճյուղ մուտք գործելուց հետո որոշ ձեռնարկություններ կպարզեն, որ իրենց սահմանային ծախսը բարձր է, և ընդհանուր շահույթը (գործառնական շահույթից հանած ֆիքսված ծախսը) բացասական է:

Իսկ ուրիշ ձեռնարկություններ կպարզեն, որ իրենց սահմանային ծախսը ցածր է, և ընդհանուր շահույթը դրական է:

Հետևաբար՝ նոր ձեռնարկություններ կշարունակեն ճյուղ մուտք գործել այնքան, մինչև սահմանային ծախսի բոլոր հնարավոր արժեքների համար ակնկալվող շահույթը հավասարվի զրոյի:


Գծ. 2 բնութագրում է ճյուղի երկարաժամկետ հավասարակշռությունը, երբ ճյուղի մեծությունը կազմում է S : Ըստ այդմ՝ ճյուղում գործում են միայն այն ձեռնարկությունները, որոնց սահմանային ծախսը M -ից փոքր է:

Առևտրի ազատականացման ազդեցությունը

Առևտրի ազատականացման դեպքում շուկան ընդլայնվում է: Հիշենք՝ պահանջարկի կորի թեքությունը հավասար է $1/Sb$: Հետևաբար՝ ճյուղի մեծության՝ S -ի, ընդլայնման հետևանքով պահանջարկի կորը կդառնա ավելի հարթ (գծ. 3):

Մոնոպոլիստական մրցակցության շուկայի վերլուծությունից գիտենք նաև, որ երբ շուկան ընդլայնվում է, ապա նրանում գործող ձեռնարկությունների թիվը՝ n , աճում է: Իսկ քանի որ պահանջարկի կորն ուղղահայաց առանցքը հատում է $\bar{P} + 1/bn$ կետում, ապա n -ի աճի հետևանքով հատման կետը կտեղաշարժվի ներքև՝ M -ից L :

Գծանկար 3



Այսպիսով՝ շուկայի ընդլայնման և մրցակցության ինտենսիվության աճի հետևանքով պահանջարկի կորը դառնում է ավելի առաձգական և D -ից տեղաշարժվում է D^* : Վերջինը նշանակում է, որ գնի տրված կրճատման դեպքում արտադրողի իրացումն ավելի մեծ չափով է աճում:

Նկատենք՝ փոքր (\bar{Q} -ից ցածր իրացում ունեցող) արտադրողների համար պահանջարկը նվազել է, իսկ խոշոր (\bar{Q} -ից բարձր իրացում ունեցող) արտադրողների համար պահանջարկն ընդլայնվել է:


Համապատասխանորեն կտեղաշարժվի սահմանային ծախսի և գործառնական շահույթի կապը բնութագրող կորը (գծ. 4):

Այն ձեռնարկությունները, որոնց սահմանային ծախսը L -ից M տիրույթում է, շուկայից դուրս կմղվեն:

Մինևույն ժամանակ, \overline{MC} -ից ցածր սահմանային ծախս ունեցող ձեռնարկությունները կշահեն, քանի որ ցածր սահմանային ծախսերի շնորհիվ հնարավորություն ունեն ի պատասխան մրցակցության ինտենսիվացման՝ նվազեցնել գինը և շուկայի լրացուցիչ բաժին ձեռք գցել: Արդյունքում՝ այդ ձեռնարկությունները կընդլայնեն շահույթը:

Իսկ \overline{MC} -ից բարձր, բայց L -ից ցածր սահմանային ծախս ունեցող ձեռնարկությունները կկրճատեն թողարկումը:

Գծանկար 4



Արդյունքում՝ ճյուղի ընդհանուր արտադրողականությունն աճում է, քանի որ շուկայում մնում են համեմատաբար արդյունավետ արտադրողները ($MC < M$), ընդ որում, առավել արդյունավետ արտադրողների ($MC < L$) կշիռն ընդլայնվում է: